

S. HAIRAPETIAN, *A History of Armenian Literature*, "Caravan Books", Delmar, New York, 1995, 600 p.

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Հայ գրականության պատմություն, «Քարավան բուքս» հրատ., Դելմար, Նյու Յորք, 1995, 600 էջ:

Սա Ս. Հայրապետյանի արժեքավոր աշխատության շորորդ հրատարակությունն է. որ լույս է տեսել անգլերեն լեզվով: Հայոց հին և միջնադարյան գրականությանը նվիրված այս աշխատությունը արժանաչավատ և կուռ շարադրանք է, որ անգլիախոս հանրություններին ըստ ամենայնի ծանոթացնում է վեց տասնյակի լավ հայ հեղինակների գեղարվեստական գործերին: Ընդ որում, Ս. Հայրապետյանն իր աշխատանքը կատարել է մեծ բարեխղճությամբ՝ խնդրո առարկա հայ գրական արժեքները բացահայտելով հայ ժողովրդի, նրա մշակույթի պատմության լաթ հենքի վրա:

Ստորև ներկայացնում ենք Կոլումբիայի համալսարանի հայագետ, պրոֆ. Ս. Պետեր Փապիի գրախոսականը այս աշխատության վերաբերյալ (որոշ կրճատումներով):

Դասական և միջնադարյան հայ գրականությունը նվիրված այս մեկ հատոր հետազոտությունը ողջունելի ներդրում է սույն բնագավառը անդրեն շեղվով ներկայացնելու և զարգացնելու համար: Ի տարբերություն արեմտյան այլ մշակույթների, որոնք վերջին երկու հարյուր տարվա ընթացքում արժանացել են համառոտագրումների, հայագիտությունը միայն համեմատաբար վերջերս պակեց զարգանալ անգլիախոս աշխարհում: Որպես հետևանք, այսպիսի ուսումնասիրությունները ավելի կենտրոնացնում են հատուկ խնդիրների, հեղինակների, ժամանակաշրջանների կամ ժանրերի շուրջ: Դրանց հակառակ, իր աշխատությունում (որին կցված են 70 էջ ծանոթագրություններ) Հայրապետյանը ձգտում է ներկայացնել ընդհանուր առմամբ շատ ընդհանրություններ, որոնց մեջ նա առանձնացնում է հին շրջանը՝ գրերի գյուտից մինչև X դ. և, ավելի ընտրողականություն ցուցաբերելով աշխատության Բ և Գ մասերում, ձգտում խուսափել ավելորդ ծանրարևոնվածությունից: Այս գլուխներում հիմնական ուշադրությունը կենտրոնացված է արձակ գրականության վրա, որն ընդգրկում է մինչև XVI դ. ժամանակաշրջանը և այնուհետև այն գրականությունը, որը հայտնի է որպես վերածննդի գրականություն և ստեղծվել է հաջորդ հարյուրամյակների ընթացքում:

Թեև աշխատությունը իր հղացմամբ կառուցված է ժամանակագրական հենքի վրա, Ս. Հայրապետյանը խելամորձ խուսափում է առանձին հեղինակների գործերի լուրջ թվարկումից (ժամանակագրորեն), ինչպես ընդունված է ավելի հին ձևերով, որպիսիք են Գ. Զարբանավյանի «Հայ մատենագրության պատմությունը» և Ն. Պողոսյանի «Հայ գրողները»: Նա խմբավորում է նյութը ավելի իմաստավորված, վերոհիշյալ ժամանակագրական սահմաններում, ըստ հեղինակների ժանրային նմանության՝ հատուկ հետազոտություն հատկացնելով երկու ամենից կատարյալ բանաստեղծներին՝ X դ. խորհրդապաշտ Գր. Նարեկացուն և XII դ. կաթողիկոս Ներսես Շնորհալուն: Միաժամանակ, հեղինակը արհեստականորեն չի բաժանում խնդրո առարկա ժամանակաշրջանը նախորդ երկու ժամանակաշրջաններից, սակայն ջանում է լինել ամփոփ՝ սահմանափակվելով հայոց ժողովրդականությանը և լեզվաբանական ու կրոնական զարգացմամբ, ինչպես նաև մեկնություններ տալով ժամանակակից որոշ գրողների ստեղծագործությունների վրա զասական որոշ կանոնների աղեղնության մասին: Ավելին, փորձ է արվում կոնտեքստավորել քննարկվող ստեղծագործությունները ժամանակի պատմական հենքի և վերջինս բնութագրող մշակութային ու գեղարվեստական միջավայրի վրա:

Բնական է, որ նման աշխատության մեջ անհնար է տալ ամեն մի հեղինակի, ժանրի կամ ժամանակաշրջանի ամբողջական անդրադարձը: Նախ և առաջ պետք է ընդունել, որ վաղ շրջանի ստեղծագործությունների մեծ մասը խմբագրվել է, սակայն միջնադարյան շատ երկեր ղեկուս ձեռագրապահպաններում են և նոր պետք է հրատարակվեն: Ավելին, նույնիսկ մի քանի տեղա հրատարակությունների ղեկուս հնուր են քննական լինելուց՝ հաճախ խմբագրված լինելով ուշ և աղճատված աղբյուրներից: Նմանապես, ինչպես կարծում է հեղինակը,

ղեկն գոյություն ունեն մի շարք շուտված խնդիրներ հայ գրականության պատմության մեջ: Այսուհանդերձ, որքանով ննարավոր է ընդգրկել այս նյութերը մեկ գրքի շրջանակներում, ներկա հատորում հաջողվել է ներկայացնել բազմաբնույթ մի հավաքածու, որն ընդգրկում է տարբեր ժանրային ոճեր (պատմություն, պատմաարքարանություն, պատմվածք, էպոս, եղերերգություն, կրոնական և աշխարհիկ բանաստեղծություն, ժողովրդական բանահյուսություն), համառոտակի անդրադարձ է արվում ղեկի աստվածաբանություն, փիլիսոփայություն, բժշկություն և սկզբնական տարրական բնագիտություն:

Որպես հայերեն բնագրից արված թարգմանություն, կատարված մի գիտնականի կողմից, որը ձևավորվել է ՀՀ ԳԱԱ Դրականության ինստիտուտում (Ծրեան), աշխատությունը մի բանի շահեկան կողմերով առանձնանում է Արևմտյան Եվրոպայում և Ամերիկայում լույս տեսած հետադոտություններից: Այսպես, Ս. Հայրապետյանը պաշտպանում է Ստ. Մալխասյանցի՝ 1940-ական թթ. առաջ քաշած տեսակետները, որոնցով, շնայած առկա վեճերին, հաստատվում էր Մ. Խոռենացու՝ V դարի հեղինակ լինելու փաստը: Մյուս կողմից, Ս. Հայրապետյանը հատուկ ուշադրություն է դարձնում վաղ ժամանակաշրջանի՝ մինչդոային բանավոր ավանդության, հիմնված գուսանական արվեստի, ինչպես նաև հետագայում դրանց դուրսից աշուղական ստեղծագործության վրա, որի նշանավոր ներկայացուցիչն էր Ստյաթ-Նուվան: Ա. Բախտով, նա ոչ միայն բերում է ամպրոպի աստվածություն Վահագնի, Արա Դեզիկի և Շամիրամի առասպելներ, Տիգրանի և Աժդահակի հակամարտության մասին պատմող պատարկներ, որն հանուր տեսությունը, այլև խոսում է անգիր պատմությունների հիմնարար բնութագրերի մասին, որոնք ընդգրկում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են կրկնությունը, միախառնումը, պարզեցումը և այլն:

Միևնույն սկզբունքը Հայրապետյանը կիրառել է Սասունցի Դավիթ էպոսի նկատմամբ, որն ավելի քան 1000 տարի դոյատևեց Վանա լճի շրջակա տարածքներում, մինչև Գ. Սրվանձտյանցի կողմից գրի առնվելը 1870-ական թթ.: Դրա հետ միասին, հեղինակը հետադուել է նաև միջնադարյան բանաստեղծությունը, հայրենները, որոնք երբեմն կապվում են Նահապետ Ժուլակի անվան հետ:

Աշխատության մյուս կարևոր արժանիքն է հին և միջնադարյան ժամանակաշրջանների ընթացքը ներկայացնող կապերի ուսումնասիրությունը: Այս տեսակետից X—XII դդ. Հայաստանում առկա էին այնպիսի պատմաներ, որոնք նման էին եվրոպական Վերածննդի ժամանակաշրջանին (XV—XVI դդ.): Մեկնելով դրանից՝ Ս. Հայրապետյանը այն միտքն է զարգացնում, որ Պավլիկյանների և Թոնդրականների հերետիկոսական խմբերը նույն դերն էին խաղում, ինչ կյուբերը և այլ ուղորմատորները XVI դարում:

Ս. Պետեր Փառս